

**Լ.Ու. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ  
ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հոդվածի քննության նյութը հայերենի նորագույն փոխառությունները հայերեն համարժեքներով փոխարինելու լեզվական գործընթացն է, գրատպության մեջ, համացանցում և համագործածական բառաշերտերում գործածվող դրանց համանշանակների՝ պատճենումների, թարգմանված տարբերակների և բառակազմական եղանակով ձևավորված կրկնակների վերլուծական քննությունը:

**Առանցքային բառեր.** փոխառություն, հայերեն համարժեք, համագործածական բառապաշար, պատճենում, թարգմանություն, բառակազմություն:

Նորագույն փոխառությունների մասին ուսումնասիրությունները, կազմված բառարաններն ու բառացանկերը հիմնականում վերաբերում են արդի հայերենի խորհրդային և հետխորհրդային շրջանի այն նորամուտ բառերին, որոնք ժամանակի մեջ կամ քննություն են բռնել և ամրակայվել գրական հայերենի բառապաշարում, կամ, չբավարարելով բառագործածման մի շարք պայմանների (հնչյունական, ձևաբանական և իմաստային լիակատար հարմարեցում), փոխարինվել են հայերենի բառաշինական համարժեքներով:

Անհրաժեշտ փոխառությունների մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն **տերմինները**, որոնք, որպես համաշխարհային մասշտաբով գիտատեխնիկական նոր ձեռքբերումների անուններ, անմիջապես մուտք են գործում փոխառու լեզվի բառապաշարային շերտեր, ապա, ժամանակի ընթացքում ունենալով տվյալ լեզվի (մեր դեպքում՝ հայերենի) «մրցակից» տարբերակներ, կամ պահպանվում են որպես կրկնակ բառաձևեր, կամ իսպառ դուրս մղվում, կամ էլ անցնում են համագործածական բառապաշար: Անշուշտ, սա լեզվի զարգացմանն ուղեկցող շարունակական գործընթաց է, որը, այնուամենայնիվ, կարիք ունի լեզվաբանների մշտադիտարկման և կանոնակարգման:

Այս ոլորտի համակարգողը լեզվաբանության «Տերմինաբանություն» գիտաճյուղն է, որի համակարգված ուսումնասիրությունների հենքով «լեզվի տերմինաշինությունը նորմավորող, տերմինների կազմության, փոխառության ընթացքը կանոնավորող գիտական մարմինները» (տերմինաբանական հանձնաժողովներ, խորհուրդներ, տեսչություններ, կոմիտեներ) կայացնում են հայերենի բառապաշարը կանոնարկող պարտադիր որոշումներ [1]: Այս գործընթացում իր կարևոր դերն ունի **կիրառական տերմինագիտությունը**, որը, «հենվելով տեսական

բացահայտումների վրա, մշակում է տերմինների և տերմինաբանության գործնական սկզբունքներ և երաշխավորություններ՝ դրանց թերությունների վերացման, գնահատման, խմբագրման, կանոնակարգման, տերմինների կերտման, թարգմանության, նկարագրման, կիրառության վերաբերյալ» [2, էջ 11]:

Սակայն տերմինագիտությունը, ինչպես և ցանկացած գիտաճյուղ, չի կարող լեզվի զարգացման «կամակոր» վայրիվերումներին անմիջապես արձագանքել, քանի որ հարկադրված է՝ կիրառական գործընթաց իրականացնելու բավականաչափ կուտակված նյութի համակարգման հենքով: Արդի ժամանակաշրջանում հայերենի բառապաշարը հեղեղվում է այլալեզու փոխառություններով՝ հատկապես գիտությանն ու տեխնիկային վերաբերող օտար տերմիններով, որոնք առաջին հայացքից թվում են անփոխարինելի: Նման տերմինները դեռևս չունեն հայերենի՝ լեզվի օրենքով հաստատված համանշանակներ: Չնայած խոսույթում հանդիպում են դրանց իմաստային, բառակազմական կամ թարգմանված տարբերակներ, սակայն, ընդգրկված չլինելով հանձնարարելի բառարաններում [3, 4], Լեզվի տեսչության տեղեկագրերում [5,6], դեռևս չեն մտնում համագործածական բառապաշար և երբեմն գործածվում են որպես տարբերակային **կրկնակներ**: Դեռ ավելին, այդ տերմիններից շատերն ունեն միայն իմաստային ընկալում, որը հնարավոր է արտահայտել միայն երկարաշունչ բառակապակցությամբ: Նման օրինակները շատ են հատկապես համակարգչային տեխնիկային առնչվող բառապաշարում՝ *աքսեսուար (երկրորդական, օժանդակ մանրամասն), մոնիտոր (համակարգչի ինֆորմացիան էկրանին արտացոլող սարք)*: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ այս շարքի փոխառությունների մեջ արդեն կան հայերեն իմաստային և բառակազմական համանշանակներ, որոնց մի մասը խոսույթ է մտել որպես կրկնակ (*դիսվիել - էկրան / սայթ - կայք / ֆլեշ - կրիչ / ֆլոփի դիսկ - ճկուն սկավառակ / կլիպ - տեսահոլովակ ևն*), մի մասն էլ որպես հոմանիշային տարբերակ (*սկաներ - պարկերամուտ, ծրիչ, տեսածրիչ*) / *սլայդ - տեսասահիկաշար, տեսաշար / դիսկ - սկավառակ, պնակիտ ևն*): Կան նաև իմաստային պատճենումներ (*քարթրիջ - ներկապնակ / վիրտուալ - թվացյալ, կարծեցյալ / ֆայլ - նիշք, թղթապանակ / պրոցեսոր - մշակիչ ևն*), որոնք մասնագիտական ոլորտում գրեթե չեն կիրառվում:

Նմանօրինակ տարբերակները, անշուշտ, ունեն տերմինաբանական կառույցների համակարգային «միջնորդության» կարիքը: Չնայած Լեզվի տեսչության տեղեկատու «Հորդորակ» կայքը ժամանակ առ ժամանակ փորձում է կանոնարկել նորագույն փոխառությունների հանձնարարելի ձևերը՝ «հորդորելով» գործածել դրանց հայացի համարժեքները, սակայն այդ հորդորանքները միշտ չէ, որ օրենքի ուժ են ունենում և չեն կարողանում կանխել գրատպության տարբեր

ոլորտներում (գիրք, մամուլ), համացանցում և նույնիսկ պաշտոնական ատյաններում գործածվող օտարաբանությունները, որոնց իմաստը մեծ մասամբ անհասկանալի է հանրության լայն զանգվածներին: Դրանք հիմնականում ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ այլ լեզուներից (մեծ մասամբ՝ եվրոպական) կատարված փոխառություններ են, որոնց մի մասն ունի հայերեն համարժեքներ. օրինակ՝ *խարիզմա* (օժտվածություն, շնորհ), *կոալիցիա* (դաշինք), *ֆորպոստ* (առաջապոստ, առաջադիրք, առաջնակետ, ամրակետ), *ֆորում* (համաժողով), *պրանսֆերտ* (դրամական փոխանցում), *կոմպլեմենտար* (համահավասար), *պրոպեկցիոնիզմ* (հովանավորչություն), *բոմժ* (անօթևան, տնանկ), *ավանպյուրիզմ* (բախտախնդրություն, արկածախնդրություն), *տեռորիզմ* (ահաբեկչություն), *պրոցես* (գործընթաց), *լիբերալ* (ազատամիտ), *դիսկրիմինացիա* (խտրականություն), *կոռուպցիա* (կաշառակերություն) են [7, էջ 55–59], [8]:

Քաղաքական խոսույթում օտարաբանությունների առատությունը վկայում է այն մասին, որ նմանատիպ փոխառյալ բառերին և հատկապես տերմիններին համանշանակ հայերեն տարբերակներ կամ չեն եղել, կամ էլ եղածները իմաստային և կառուցվածքային պահանջներով չեն համապատասխանել համագործածական բառապաշար մտնելու պայմաններին: Վերջին տասնամյակում հրապարակվել են (թղթային կամ էլեկտրոնային եղանակներով) նորագույն փոխառություններին և դրանց հայեցի տարբերակներին վերաբերող բառարաններ, սակայն դրանցում կամ իսպառ բացակայում են համագործածական բառապաշարում շրջանառվող շատ օտար բառեր [3,4], կամ էլ առաջարկված հայերեն համարժեքները միշտ չէ, որ բավարարում են տերմինաշինության պահանջները [8]:

Լեզվաբան Ռ.Կ. Սաքապետոյանը 2014 թ. հրատարակած իր «Բառգրքուկում», նման «վիճահարույց» բառերը ներկայացնելով համընդհանուր ուշադրության կամ, այսպես ասած, «փորձաքննության», «Առաջաբանում» նշում է, որ թեև դրանցից «ոչ բոլորն են, որ վստահաբար արժանանալու են մասնագետների ու հանրության հավանությանը», սակայն «ամենից ճիշտ և արդար դատավորը Նորին մեծություն ժամանակն է» [9, 6]:

Այնուամենայիվ, մեր կարծիքով, փոխառություններին վերաբերող ցանկացած նյութ (լինի դա գրքային, թե էլեկտրոնային) տերմինաշինական կառույցների կողմից պետք է ուսումնասիրվի և համակարգված ներկայացվի լայն հանրությանը:

Ստորև մասնակիորեն վերլուծելով՝ ներկայացնենք հիշյալ բառարանում զետեղված մի քանի փոխառություններ, որոնցից շատերը, չնայած բարեհունչ են և իմաստային առումով կարող էին փոխարինել այլալեզու բառերին, սակայն առայսօր հայերենի խոսույթում «քննություն չեն բռնել»:

Գիտական և տեխնիկական տերմիններ. *հիդրոդինամիկա-ջրագորություն / հիերոգլիֆ-մեհենադրոշմ* (բառակազմ. պտճ.); *մոնոլիտ-մենաքար / ինֆորմատիկա-տեղեկագիտություն / կալորիա-ջերմուժ / սյուժե-դիպաշար / կալկուլյատոր-հաշվեմեքենա / միկրոալիքային վառարան-շողահնոց* (նորաբ.); *սոցիոլոգիա-ընկերաբանություն / յոդ-մանիշ / պրոֆեսոր-ուսուցչապետ / ավտոմատ-ինքնեկ / տրամվայ-էլեկտրաքարշ, հանրակառք* (արևմտ.); *գեն-ծին / վիրամին-կենսանյութ / լաբորատորիա-աշխատանոց / լավա-հրանյութ / ակադեմիա-կաճառ / սպեկտր-լուսապարկեր* (փոխառյալի իմաստին չհամապատասխանող բազմիմաստ բառեր) ևն:

Արվեստին վերաբերող տերմիններ. *ակորդեոն-ձեռնադաշնակ / դիրիժոր-նվագավար / կինոֆիլմ-շարժանկար / կլառներ-նրբասրինգ / կոնսերվատորիա-երաժշտանոց / սիմֆոնիա-համանվագ / սոնետ-ձայնյակ, հնչյակ / օպերա-երգախաղ* (արևմտ.):

Տնտեսագիտական տերմիններ. *բանկ-դրամատուն / բանկետ-դրամանիշ, դրամատուն / բյուջե-էլեմենտար / բորսա-սակարան / կրեդիտ-արժենիշ / հոնորար - պարվագին / մաքս-անցագին / ռադիո-ձայնասփյուռ* (արևմտ.); *պուլտ-հեռավար* (նույնանուն բառ):

Բժշկական տերմիններ. *ատրոֆիա-ծյուրանք / մարազմ-զառամախտ, ծյուրանք* (նույնի կրկնություն) / *գինեկոլոգ-կնախտաբան, կնախտաբույժ / կոմամահաքուն, մահաթմբիր / պինգեպ-անիծքաշ* (գեղագիտ. պահանջներին չբավարարող) / *կարանտին-զգուշարան / կլաուստրոֆոբիա-բանտավախություն* (նորաբ.) / *մենինգիտ-ուղեղափառաբաշ / պոլիկլինիկա-բուժարան, դարմանատուն / սկլերոզ-կարծրուկ / տոնոսիտ-արենաչափ, ճնշագիր / պիպերկաշթահամար* (արևմտ.):

Կենցաղային և այլ բնագառներին վերաբերող բառեր. *անեկոտ-մանրահեպ / գաստրոնոմ-նպարախանութ / հումոր-զվարթախոհություն / կոմպոտ-պողանուշ, չամչարակ / ունիվերսալ - համապիտանի / կոմֆորտ-հարմարավետություն, հարմարակեցություն, դյուրակեցություն, հեշտակեցություն / կոտլետ-կոդիկ / մարինադ-քացխու / սենդվիչ-լուած / շոկոլադ-կոլահատ / պիկնիկ-դաշտագնացություն, դաշտահանդես / սիգար-ծխագլան / կարտոֆիլ-գեպնախնձոր* (արևմտ.):

Փորձենք վերլուծաբար դիտարկել «Բառգրքուկում» առկա հասարակական-քաղաքական բնույթի մի քանի տերմիններ՝ նշելով դրանց ծագումը և առաջարկված հայերեն համարժեքների ձևավորման եղանակները:

*Բյուրո* (< ռուս. бюро < ֆր. bureau) – *գրասենյակ* (իմաստի թարգմ.), *դիվանատուն* (արևմտ.) / *դիվերսանտ* (< ռուս. диверсант < լատ. diversion) –

*խափանարար* (իմաստ. պտճ.) / *կոսմոպոլիտ* (< ռուս. космополит < հուն. *kosmopolites*) – *աշխարհաքաղաքացի, փեթերաքաղաքացի, հանրաքաղաքացի* (կառուց. պտճ.) / *շտաբ* (< ռուս. штаб < գերմ. [Stab]) – *սպայակույտ* (իմաստ. պտճ.) / *սենատ* (< լատին. ` *Senat* – *ծերակույտ* (պտճ. [հին Հռոմ]) / *սոցիալական-ընկերային* / *սոցիալիստ-ընկեր(ա)վար* (արևմտհ. ) / *վիզա* (<լատին. ` *visus*) – *այցեգիր* (իմաստ. պտճ.) / *քրոնիկոն* (< ռուս. хроникон < հուն. chronicon) – *մանրալուր* (թարգմ.՝ իմաստի նեղացմամբ):

Նշված բառարանում նաև զգալի քանակ են կազմում այն փոխառությունները, որոնց արդեն ընդունված կրկնակները ներկայացվում են հոմանիշային տարբերակներով:

Օրինակ՝ *աբոմ-հյուլե, կորիզ, միջուկ / քիմիա-բնալուծություն, փարրաբանություն / դեպրեսիա-ընկճախտ, հոգեբեկում / դեպուլ-պահեստամաս, մանրակ, մանրամաս / դիետ-սննդականոն, կերակրականոն, կենցաղույթ, պահեցողություն, ողջականոն, սննդառեժիմ, սննդակարգ / էսթետ-գեղագետ, գեղեցկագետ / էսքիզ-ուրվանկար, սրվերագիր, ուրվապատկեր / ժոկեյ-ձիարշավորդ, ձիավարիկ / ինդուստրիա-արդյունաբերություն, ճարտարարվեստ / կոմեդիա-կատակերգություն, զավեշտախաղ, ծաղրերգություն / կոնգլոմերատ-հանքախառնուրդ, շեշագող / հիմն-օրհներգ, փառերգ, ազգային քայլերգ / հորմոն-ներագրակ, ներզարուկ / միկրոբ-մանրէ, կենսիկ / պանորամա-համայնապատկեր, շրջափետսարան:*

Մինչդեռ, ինչպես նշում է տերմինագետը, «տերմինաբանության մեջ անթույլատրելի է այն դեպքը, երբ նույնանշային շարքի անդամները դառնում են նույն համակարգի տերմիններ: Ճիշտ է, նրանց միջև ընթանում է պայքար՝ մինչև դրանցից մեկի վերջնականապես կայունանալը համակարգում, սակայն այնքան ժամանակ, քանի դեռ դրանք զուգահեռաբար գոյատևում են, առկա է թյուրիմացության, շփոթության վտանգը» [2, էջ 234]:

Ամփոփելով վերը բերված օրինակների հպանցիկ քննությունը՝ կարելի է եզրակացնել, որ նշված փոխառյալների դիմաց առաջարկված հայերեն համարժեքները հիմնականում արևմտահայերենից վերցրած, բայց մեր լեզվամտածողությանը խորթ կրկնակներ են կամ էլ չհաջողված արհեստածին պատճենումներ, որոնք փոխառյալ տերմինաշինության մեջ ամրակայման միտում չեն ունենում:

Փոխառյալ բառերի (մանավանդ տերմինների) հայերեն համանշանակների ձևավորման և համընդհանուր բառապաշարում ամրակայման գործընթացում իր դերն ունի նաև բառօգտագործողների խոսքային մշակույթի մակարդակը, որի բարձրացմամբ պիտի զբաղվեն ոչ միայն կրթական հաստատությունները, այլև կիրառական լեզվաբանության ողջ գործիքակազմը:

Նորագույն փոխառություններից հատկապես բանավեճերի տեղիք են տալիս տերմինները, քանի որ լայն գործածության ոլորտ մտնելով՝ դրանք շուտով դադարում են ընկալվել որպես օտարալեզու բառեր և, նորովի իմաստավորվելով փոխառու լեզվում, մուտք են գործում բառապաշար՝ փորձելով ամրակայվել մասնագիտական բառաշերտերում: Այս ոլորտում կարևորվում է տերմինաբանության դերը, որի կարևոր գործառույթներից են փոխառյալ տերմինների մշտադիտարկումն ու դրանց հայերեն համարժեքների քննական վերլուծությունը: Ի տարբերություն բառակազմության այլ ձևերի՝ տերմինաշինությունն ունի իր պահանջները [2, էջ 252-254], որոնց ապահովման դեպքում միայն նորաստեղծ համանշանակը կունենա հաջողություն:

Տեմինաշինական նորաբանությունները համագործածական բառապաշար են մուտք գործում լեզվի օրենքի կիրառման պահանջով: Այսպես, օրինակ, Լեզվի պետական տեսչության կայքի վերջին թարմացումներում առաջարկված տերմիններից շատերն արդեն մտել են համագործածական բառաշերտեր: Հատկապես ուշագրավ են անգլերենից փոխանցված տեխնիկական բնույթի բառաձևերը, որոնց իմաստային ընկալումը թերևս հասանելի է միայն հանրության փոքրաթիվ շրջանակներին՝ նեղ մասնագետներին և անգլերենը տիրապետողներին: Նման տերմինների փոխարինումը հայերեն համարժեքներով դրական մեծ տեղաշարժ է տերմինաշինության ասպարեզում: Այդպիսի օրինակներ են՝ *ափդեյթ-թարմացում / ափոդ-վերբեռնում / ափիքեյշն-հավելված / բեյջ-անվանաքարտ / բլանկ-ձևաթուղթ / դաունլոդ-ներբեռնում / ըքաունթ-հաշիվ, օգտահաշիվ / թինեյջեր-դեռահաս, պատրանի / հաքեր-ցանցահեն / չաթ-գրուցարան / պրինտեր-տպիչ / ջիմ-մարզասրահ / սթաֆ-աշխատակազմ, անձնակազմ / սրեպլեր-կարիչ / վերբալ-խոսքային, բանավոր / փասվորդ-գաղտնաբառ / քսերոքս-պատճենահան/քրոնիկոն-ժամանակագրություն / օնլայն-առցանց / օֆլայն-անցանց* ևն [6]:

Չպետք է անտեսել նաև լեզվական այն իրողությունը, որ փոխառյալ բառերի մեջ կան օտարազգի բառեր, որոնք, ինչպես նկատում է լեզվաբանը [10, էջ 209-210], **անթարգմանների** են, և դրանց «բնագրային» ձևերը **անհրաժեշտ** փոխառություններ են:

Հայերեն համարժեքների առաջարկված այս տարբերակները ձևավորվել են պատճենման և կիսապատճենման տարբեր եղանակներով՝ հիմքում ունենալով հայերենի բառապաշարը: Անշուշտ, դրանք կգործածվեն գրական լեզվում առաջին հերթին պետական աստիճանների պաշտոնական գրատպության և գրագրության մեջ, սակայն խոսակցականում դեռևս կշարունակի գերակայել օտար տերմիններով հագեցած խոսույթը: Իսկ թե այդ աստիճանակարգային պայքարում ո՞րը կդառնա գերակա, «քմահաճ» լեզուն ժամանակի մեջ ցույց կտա [10]:

Որպես ամփոփիչ խոսք պետք է ասել, որ նորագույն փոխառությունների թափանցումը հայերենի բառապաշար արժանանում է երկարժեք գնահատականի: Մի կողմից՝ դրանք համագործածական բառապաշարը հարստացնում են գիտության և տեխնիկայի ոլորտի գործուն տերմիններով, հայերենի բառաշերտեր մտցնում հաճախ անթարգմանելի հասկացություններ, որոնք իրենց հերթին բառակազմական կաղապարներով համալրում են նորաբանությունների կազմը, մյուս կողմից՝ խաթարում են հայերեն համարժեքներով տերմինաշինությանը՝ սպառնալով մայրենիի անաղարտությանը: Ուստի անհրաժեշտ է շարունակաբար մշտադիտարկել ու վերահսկել փոխառությունների գործընթացը: Լեզվաբանների, բառարանագիրների, տերմինաբանների, Լեզվի պետական տեսչության, պետական այլ գերատեսչությունների և հատկապես կրթության ոլորտի պատասխանատուների համագործակցված գործունեությունը պիտի ուղղված լինի հայերենի խոսույթ թափանցած փոխառյալ բառերի համակարգմանը, համացանցում հայտնվող նորակազմությունների հոմանիշային տարբերակների վերլուծությանը և տեղեկատվական տարատեսակ միջոցներով ընդունված որոշումների մասին հանրությանը տեղեկացնելուն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [https://hy.wikipedia.org/wiki/Տերմինաբանական\\_կոմիտե](https://hy.wikipedia.org/wiki/Տերմինաբանական_կոմիտե)
2. **Պետրոսյան Հ.Ց.** Տերմինագիտության հիմունքներ: Դասագիրք, ՀՀ Կրթ. և գիտ. նախ., ՀՊՃՀ, Եր., Ճարտարագետ, 2010, 304 էջ:
3. Նոր բառեր: Պրակ Ա-Գ / Կազմ.՝ Ա.Ս. Գալստյան և ուրիշ., Խմբ.՝ Վ.Լ. Կատվայան, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստ., Եր., Գիտություն, 2015–2017, 196, 184, 136 էջ:
4. **Էդյան Ս.** Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002, 492 էջ:
5. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (1956–2006) / Կազմ. Հ.Խ. Բարսեղյան; Գիտ. խմբ.՝ Լ. Միրզոյան, ՀՀ ԿԳՆ, ՀՀ ԿԳՆ լեզվի պետ. տեսչություն, Հայերենի բարձրագույն խորհուրդ, Եր., 9–րդ հրաշալիք, 2006, 384 էջ:
6. [https://hy.wikipedia.org/wiki/Լեզվի\\_կոմիտեի\\_հորդորակներ](https://hy.wikipedia.org/wiki/Լեզվի_կոմիտեի_հորդորակներ)
7. **Դավթյան Յու.** Նորագույն փոխառությունները մերօրյա մամուլում // Կանթեղ, Գիտ. հոդվածների ժող., 2005, թ.4, էջ 55–59:
8. **Հայրապետյան Ա.** Օտար բառերի բառարան, Հեղինակային հրատ., Եր., 2011, 643 էջ:
9. **Սաքապետոյան Ռ.Կ.** Բառգրքույկ: Նոր և նորակազմ բառեր հայերենում, Եր., ԵՊՀ հրատ., 2014, 80 էջ:
10. **Սուքիասյան Ք.Ա.** Ժամանակակից հայերենի նորագույն փոխառությունները և նրանց թարգմանության ու հայերեն համագործերի հարցը // Բանբեր Երևանի համալս., 2 (71), Եր., Երևանի համալս. հրատ., 1990, էջ 203–210:

Լ.Ս. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**АНАЛИЗ ПРИМЕНЕНИЯ НОВЕЙШИХ ЗАИМСТВОВАНИЙ И ИХ  
АРМЯНСКИХ ЭКВИВАЛЕНТОВ**

Материалом для рассмотрения статьи является языковой процесс замены новейших заимствований армянского языка армянскими эквивалентами, аналитическое рассмотрение их условных обозначений, используемых в книгопечатании, интернете и в словарных группах для совместной работы-копий, переведенных версий и словообразовательных дубликатов.

**Ключевые слова:** заимствование, армянский эквивалент, совместный словарный запас, копирование, перевод, словообразование.

L.U. HAYRAPETYAN

**EXAMINATION OF USING THE NEWEST BORROWINGS AND THEIR  
ARMENIAN EQUIVALENTS**

The linguistic process of replacing the newest borrowings by Armenian equivalents is considered.

The analytical examination of their calques used on the Internet and common vocabulary, as well as the translated variants and equivalents formed by the word – forming method is given.

**Keywords:** borrowing, Armenian equivalent, common vocabulary, calque, translation, word formation.

ՀՏԴ 82-84.004.1=19=161.1=111

**Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ, ԱՌԱՐԿԱ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ  
ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,  
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Դիտարկվում են բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչներով ածականական դարձվածային միավորների քերականական առանձնահատկությունները: Ներկայացված են նախադասության մեջ դրանց կիրառման ընդհանրություններն ու տարբերությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում:

**Առանցքային բառեր.** դարձվածային միավոր, քերականական օրենքներ, ձևաբանություն, շարահյուսություն, կառուցվածքային տիպ, համեմատության աստիճաններ:

**Ներածություն:** Յուրաքանչյուր դարձվածային միավոր կազմվում է տվյալ լեզվի քերականական օրենքներով՝ հաշվի առնելով ձևաբանական և շարահյուս-